

S & S LAW OFFICES

Specialized in



- ◆ Immigration
- ◆ Divorce
- ◆ Personal Injuries

100 N. Brand Blvd #504
Glendale, CA 91203

818-539-2245

Universal
Travel & Tours
www.UniversalTravelAndTours.info



Համահայկական Ամառային Նրջագայություն
Դեպի BAHIA MEXICO



818.244.0202

1305 E. Colorado St., Glendale, CA 91205

4 Օր 3 ԳրեՆԻ

ՕԳՈՍՏՈՍ 21-24

\$299
4 հոգուց բաղկացած սենեակի համար
ՄԱՆԵՆ ԱՆՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍՓԻՒՌԻ ԱՍԵՆԱՏԱՐԱԾՈՒՆ ԱՆԿԱՆ ԾԱԲԱԹԱԹԵՐԹԸ **\$0.75**

ՀԱՅ ԿԵԱՆՔ

USA **ARMENIAN LIFE** ՀԱՔԱԹԱԹԵՐԹ

Issue **1169**
ԹիՒ

ARMENIAN EDITION

Օգոստոս 21-27, 2009

usArmenianlife@yahoo.com
(818)241-5777 Fax:(818)241-7929
P.O. BOX 1339, Glendale, CA 91209, USA

Այս հրատարակությունը որպես կվեր է տրվում միայն որոշ հաստատություններում, իսկ մնացած բոլոր տեղերում՝ վաճառվում է



Միջազգային
Գործարարական
Դիւանագիտութեան
Վարպետ՝
ԿԷՐԻ ՊԵՏԵԱՆ

Էջ 3



ՄԻՇԵԼ ՕՊԱՄԱ Էջ 12



ՃԱՏՐԱԿ.
ՖԻՏԵ-Ի ԿՐԱՆ ՓՐԻԻ 5-ՐԴ ՄՐՅԱԸԱՐՔ
ԱՐՈՆԵԱՆ ԵՒ ՅԱԿՈՒԲԵԱՆ
7-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ
ՊԱՐՏՈՒԵՑԱՆ Էջ 17



«ՁԱՅՆ ԲԱԶՄԱՑ...»
Ժողովածու գրքի
շնորհանդէս Էջ 8



Hon. Publisher
RITA V. JABARIAN

Executive Publisher & Managing Editor
APPO K. JABARIAN

Contributing Editor Emeritus
HRANT SIMONIAN

Assistant Managing Editors
KARINE MKRTUMYAN,
DIANA ASLAN,
RIMA GEVORKIAN

Youth Forum:
NATHALIE NOURIAN, JIRAIR KHOROZIAN
LIANA AGHAJANIAN, VREJ NASHALIAN

Editorial Advisory Board
A. JABARIAN,
ALBERT HOFMANN,
K. KOUYOUMJIAN,
MARIA SMITH,
GLEN BROWN

Contributors
HARUT SASSUNIAN
ALBERT HOFMANN, JOHN YUSEF
GLEN BROWN, PhD
MARIA SMITH, MD
PROF. J. WILLS
MARIANN CALAHAN

Advertising Sales

Hye Media Ad Agency 818-241-5777
AMN HYE KIANK SHABATATERT - USA
ARMENIAN LIFE Magazine USPS# (020-696)
is published weekly by TRI MEDIA CO. 2450
Crystal St., Los Angeles CA 90039, Annual sub-
scription (52 weekly issues): \$40 in California;
\$50 in U.S.A.; US\$100 in Canada; \$250 for-
eign countries.

AMN HYE KIANK SHABATATERT - USA
ARMENIAN LIFE Magazine is an English
language independent publication serving the
Armenian-American communities in Cali-
fornia and elsewhere. Signed articles express
the views of their authors, and do not neces-
sarily reflect the views of AMN HYE KIANK
SHABATATERT-USA ARMENIAN LIFE
Magazine. Periodical Postage paid at Los
Angeles, CA 90052-9998. POSTMAS-
TER send address changes to: AMN HYE
KIANK SHABATATERT - USA ARME-
NIAN LIFE Magazine, P. O. BOX 1339,
Glendale, CA 91209-1339, USA, Tel.: (818)-241-
5777; Fax: (818)-241-7929



Միակամուրթիւն
Հայրենիքի
Հփօրացման
Միոյն

EMBASSY OF REP. OF ARMENIA -USA
2225 R Street, N.W., Washington, D.C. 20008
Tel. (202) 319-1976 Fax (202) 319-2982

EMBASSY OF REP. OF ARMENIA -CAN
130 Albert Street, Suite 1006, Ottawa
(Ontario) K1P 5G4

Tel. (613) 234-3710 Fax (613) 234-3444
REP. OF ARMENIA PERM. MISSION TO UN
119 E. 36th Street New York, NY 10016
(212) 686-9079 Fax: (212) 686-3934

CONSULATE GENERAL
OF REPUBLIC OF ARMENIA
Los Angeles

1000 N. Central Ave #200, Glendale CA 91202
(818) 265-5900 Fax:(818) 265-3800



Nagorno Karabakh Republic
NKR aka ARTSAKH
ARMENIAN REPUBLIC
Independent since January 6, 1992

NKR Public Affairs Office
122 C Street, NW Suite 360, Washington, DC 20001
Tel: (202) 347-5166 Fax: (202) 347-5168


Այս համարում կարդացեք.



ՅԵՂԱՅԻՆ
ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝
ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ
ՄԷԶ
ՓԱՐԻՉԻ ԿՈՐՍՈՒԱԾ
ԱՌԻԺԸ 5

«ԶԱՅՆ
ԲԱԶՄԱՑ... »
Ժողովածու
գրքի
շնորհանդէս 8

Ջրանտ Սիմոնեան
ՀԱՅԱՍՏԱՆ՝
ԱՆԱՌՈՂԶ
ՄԹՆՈՒՆՈՐՏԻ
ՄԷԶ 6



Յարութ Սասունեան

Օսմանեան
Արխիւներուն
Մէջ
Գտնուող
Ցեղասպանութեան
Փաստաթուղթերուն
Բացայայտումը 7



ԱՆՇԵՎԻՆԱ
ԺՈՒԲ 13



ԱՄՈՒՍ
Sweets 17



ԱՆՈՒՇԱՅՈՏ 12
Տեսափրփրական 18

ԽԱՉԲԱՌ 19

ՄԱՏՂԵՐԸ ԿԸ ԳՈՒԹԱԿԵՆ 20

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ 21

KarabakhOpen.com 26

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22 23

Մինչ Ատրպէյճան Ունի Իր Նաֆթային Զարստութիւնը,
Հայաստանն Ալ Ունի Իր Կազմակերպուած Սփիւռքը

«Մեծ Խաղը» վերսկսած է: Ո՞վ պիտի տիրէ մետաքսի ճանապարհին, որ կը միացնէ Միջերկրականի աւազանը փողով եւ նաֆթով հարուստ Կեդրոնական Ասիական հանրապետութիւններուն հետ:

Կովկասի շրջանը դարձեալ մուտք գործեց որպէս հրապարակ միջազգային մրցակցութեան՝ գրլխաւորաբար գերիզօր Միացեալ Նահանգներու, Եւրոպական Միութեան, Չինաստանի եւ Ռուսիոյ միջեւ, նաեւ շրջանային ուժերու, ինչպիսիք են՝ Իրանը, Թուրքիան եւ միւս կողմէն՝ Հայաստան-Արցախը իր կազմակերպուած Սփիւռքով:

Կասկած չիկայ թէ կովկասեան այն երկիրը, որ լաւագոյնս կը զօրակոչէ եւ կը կառավարէ իր մարդկային եւ տնտեսական միջոցները եւ զանոնք իմաստուն կերպով կը ներդնէ, ան կը դառնայ կարելի դերակատար մը ոչ միայն շրջանի, այլ նաեւ աւելի լայնատարած միջազգային տնտեսական բեմին վրայ:

Կովկասեան բազմաթիւ երկիրներէն՝ Վրաստան, Ատրպէյճան եւ Հայաստան-Արցախ, միակ երկիրը, որ յաջող կերպով գոհացուցած է առողջ եւ երկարակեաց տնտեսութիւն ունենալու համար կարելի դարձաւ միայնակալն մը՝ Հայաստան-Արցախն է:

1991ին, որպէս անկախ եւ գերիշխան պետութիւն վերակայացումէն ասդին, Հայաստանի եւ Սփիւռքի հայերը արագօրէն ախատանքի անցան հիմքը դնելու զանազան տեսակի կամուրջներու, որովհետեւ շարք մը նոր առիթներ յայտնուեցան իրենց հորիզոնին վրայ:

Նախապէս քաղաքական արգելքներով բաժնուած, յատկապէս սովետական «երկաթեայ վարագոյրով», հիմա հայերը, միջազգային սահմաններուն միւս կողմի իրենց ազգակիցներուն եւ բարեկամներուն հետ կը վայելեն տնտեսական եւ քաղաքական զարգացման նոր ժամանակաշրջան մը:

Անշուշտ, այդ զարգացումը պիտի չիրականանար, բացի եթէ երկու կողմերէն, կամուրջ կառուցողները մէկը միւսին ձեռք չմեկնէին, համագործակցութեան ոգիով եւ տնտեսապէս ու քաղաքականապէս գործնական Հայրենիքի հզօր տեսլականով:

Այդպիսի կամուրջ կերտողներէն մէկն է երկար տարիներու միջազգային գործառնութեանց մասնագէտ Կէրի Պետեանը, որ աւելի քան 20 տարի է, անսպառ ջանքերով, գործարարական առիթներ եւ քաղաքական կապեր կը կերտէ:

Ներքեւի գրութիւնը, վաստակաւոր լրագրող եւ գրող Ռէյ Վէյման Կրտսերի կողմէ գրուած ուշադրութեան արժանի յօդուած մըն է Կէրի Պետեանին մասին: Ռէյ նաեւ կը գործէ որպէս գործարարական եւ շուկայավարման գրող մը:

Ան հեղինակն է բազմաթիւ գիրքերու, ներառեալ «Ճաք Քըրպիի Արուեստը», «Հազուագիւտ Դրամանիշներու Հաւաքակազման Ընկերակիցը» եւ «Ռեռքեր եւ Աղաւնի». Ալեքսանդր Նէքիթայի Արուեստը»: Ան նաեւ գրած է ամերիկեան հեռուստատեսային «Սթար Թրէք» հեռատեսիլային շարքին բնագիրը: Եւ ան շաբաթագիր կը պահպանէ հետեւեալ կայքէջին վրայ.

www.heavypen.com:

Շաբ.ը՝ էջ 3-ում

Միջազգային Գործարարական Դիւանագիտութեան Վարպետը՝ ԿԵՐԻ ՊԵՏԵԱՆ

Գրեց՝ Ռէյ Վէյման Կրտսեր
Անգլերէնի թարգմանեց՝ Աբո Չափարեան

Սկիզբը՝ էջ 2-ում

ԿԵՐԻ ՊԵՏԵԱՆ իւրայատուկ տեսակի անձ մըն է: Դիւանակ մտածող մը, պահպանողական եւ վերլուծամետ՝ ան ուշադիր կերպով կը լարէ իր փըն-տըրտուքը խոշոր գնումներու եւ շինարարական ծրագիրներու համար: Նախքան առեւտրային անշարժ կալուածներու շուկային տնտեսական զարկվայր դանդաղեցման ժամանումը, ան իր ասպարէզին միւս արհեստավարժներուն նման համաձայնութիւններ կայացուց: Այնպիսի համաձայնութիւններ, որոնք հետզհետէ կրնար ֆինանսաւորել եւ արագօրէն վերածուել շահոյթաբեր ձեռնարկի: Սակայն, ան նաեւ կը հետապնդէր իր հաւատարմութեամբ բարոյապէս «բարձր կարգի գործառնութիւններ», գանձանման կալուածներ, որոնք պիտի կարենային դիմանալ դժուար ժամանակներուն: Այդ ջանքին կայացման նպատակին համար է, կ'ըսէ Պետեան, որ իր ժամանակին խոշոր մասը կը ծախսէ: Եւ անոր ջանքերը արդիւնաւորած են:

Ի տարբերութիւն իր բազմաթիւ պաշտօնակցներէն, Պետեան կրցած է յաղթահարել տնտեսական ճրգնածամին պատճառած խարխափումները: «Նամքո Քափիթըլ»-ին համար, «Պլաքսթոն» ընկերութիւնէն 115 միլիոն տոլարի արժեքաւոր Լո Անճելոսի քաղաքամէջի «Մարիօթ» պանդոկի գնման համար երկար եւ երբեմն դժուար բանակցութիւնները կառավարելէն ետք, Պետեան անցաւ «Մարիօթ» կալուածին կառավարման պաշտօնին եւ ամբողջ Միացեալ Նահանգներու տարածքին բազմաթիւ այլ հիւրանոցային ներդրումային գործառնութեանց: Նոյնիսկ, երբ «Նամքո» մխրճուեցաւ սընանկութեան մէջ, Պետեան արդէն կը գործէր իր յաջորդ՝ «Ծրագիր Պ.Ի» վերայ:

Մինչ ան կը տնօրինէր զանազան երրորդ կողմի կալուածային կառավարման եւ գնման համաձայնագրեր, ան առաջ քաշեց վերկանգնման բազմաթիւ վերակարողական ծրագիրներ, որոնք տնտեսութեան բարգաւաճման ժամանակ ունեցան աւելի քան մէկ միլիարդ տոլարի դրամագլուխային արժեք:

Ծրագրաւորումէ եւ բանակցութիւններէ մօտ երկու տարի ետք, Պետեան նաեւ ապահովեց իրաւունքը կառուցելու երեք աստղանի պանդոկ մը եւ համագումարի մեծ կեդրոն մը Երեւան՝ Հայաստանի մէջ: «Ես զգացի թէ այս՝ լաւագոյն ժամանակն է այդպիսի ծրագիր մը իրականացնելու համար: Ալիքը արդէն իր ուղղութիւնը փոխած է միջազգային շուկայէն ներս: Երկու կամ երեք տարիէն, ես կ'ակնկալեմ, որ Հայաստանի տնտեսութիւնը ամբողջապէս կը վերականգնուի: Հայաստան վարկային սիստեմի վրայ հիմնուած ընկերութիւն մը չէ, եւ աւելի լաւ ի վիճակի է այս տնտեսական մեծ ճգնաժամը յաղթահարելու քան բազմաթիւ այլ երկիրներ: Ըստ իս, սա լաւագոյն ժամանակն է ապագան ծրագրաւորելու», ըսաւ Պետեան:

Շինարարական ծրագիրը միատեղ գործառնութիւն մըն է Հայաստանի

Արդիւնաբերութեան եւ Առեւտրի Պալատին հետ: Ան կ'ընդգրկէ 202 սենեակնոց հիւրանոց մը իր 40 յարկաբաժիններով երկարատեւ կեցութեան համար, լայնատարած հանդիսարահներով, ժողովասրահներով, 150 հոգինոց ճաշարանով, լողային եւ մարզական փակ եւ բացօդայ բաժանմունքներով, անվճար Wi-Fin կը գերարդիական համագումարի շէնքով մօտ 3500 մեթր տարածութեամբ: Ցուցարարաւոր, կցուած՝ հիւրանոցով եւ լայնատարած ինքնաշարժի կանգառով, պիտի ըլլայ ամենաառաջին արդիական համագումարի կեդրոնը Հայաստանի մէջ:

Պալատը գործընկերութիւն կազմած է «Պետեան Ինթըրնաշնըլ»-ի հետ, դէպի կեդրոն համագումարներու եւ առեւտրական փառատօներու գործառնութիւններ ապահովելու համար: Պալատի նախագահ Մարթին Սարգսեան մշտեց թէ «շինարարական ծրագիրը աւելի քան 200 մշտական աշխատատեղեր ստեղծէ, յաւելեալ 50-60 կիսաժամ աշխատատեղերով, չիջելու համար հարիւրաւոր շինարարական եւ կապակից աշխատատեղերը այս կեդրոնի շինարարութեան ժամանակ»:

«Հայաստան տեսապէս եղած է պատեհ առիթներով լի նախկին Սովետի անկախ պետութիւններու զարգացող երկիրներու հարաւային մայրուղին», կ'ըսէ իստեան: «Սակայն, պէտք չէ փորձուի թէ մինչ գոյութիւն ունին թաքուն գանձեր ամբողջ աշխարհի մէջ, երբեմն աւագոյն գանձը մեր երկրին մէջ: Արտաշխարհի իմ ներդրողները հիմա շահաքրքրուած են արժեքը նուազած անշարժ կալուածներով Միացեալ Նահանգներէ ներս: Գրեթէ բոլոր գործառնութիւնները, որոնց համար ես դրական խորհուրդ կու տամ, ունին շատ ցած արժեքներ: Միակ խնդիրը, որ ես կը տեսնեմ, այն դրամատուներն ու հսկայ ֆոնտերն են, որ պարտին ճշտել կալուածներուն իսկական արժեքը, ըստ շուկայի իսկական արժեքներուն»:

Ծնած՝ 1960ին Հալէպ, Սուրիա, Պետեան, 15 տարեկանին, իր ընտանիքին հետ գաղթած է Միացեալ Նահանգներ: Բազմալեզու՝ Արաբերէնով, Արաբերէնով, Հայերէնով, Թրքերէնով եւ Անգլերէնով, վկայուած գործարարութեան տիտղոսով, փորձառութիւն վաստկած գերընկերութենէ ներս եւ օտտուած տիւնամիկ անհատականութեամբ, 1992ին, Պետեան իտալական թեկնածու էր Հայաստանի Արդիւնաբերութեան եւ Առեւտրի Փոխ-Նախարարութեան պաշտօնին: Գրեթէ այդ ժամանակ, նորակազմ պետութեան կառավարութենէն ներս, ան նաեւ ծառայեց որպէս Գործարարութեան Զարգացման Գլխաւոր Խորհրդակալը:

«Այդ ժամանակներուն, դժուար էր մեկնարկման կէտը գտնել: Անոնք կարիք ունէին ամեն ինչի», կ'ըսէ ան: «Անոնք կարիք ունէին բազմացնելու միջազգային երթելութիւնը, հիմնադրամի ֆոնտեր ապահովելին, ըզբօսաշրջիկութեան արդւնաբերութիւնը ստեղծելին, առեւտուրը վերաշխուժացնելու եւ քանդելու կարգ մը ակնառու մշակութային եւ կառավարական արգելքներ»:

Այդ ժամանակ, ինչպէս հիմա ան կը կատարէ, Պետեան յաճախականու-



Կերի Բետեանի նոր ծրագիրը որը կներկայացնէ հյուրանոցի եւ խորհրդակցութիւնների կեդրոն Հայաստանում

Միջազգային Գործարարական Դիւանագիտութեան Վարպետը՝ ԿԵՐԻ ՊԵՏԵԱՆ

Սկիզբը՝ էջ 2-ում

Քեանք ճամբորդեց դէպի Եւրոպա, Միջին Արեւելք եւ Ասիա առաջ քշելով գործարարական առիթներ եւ խորհուրդներով ներդրողներուն հարկային դիրքերը ներդրողներով եւ այս տնտեսական նպաստաւոր առաջարկութիւններով: Ան օգնեց հայկական բարձր արդիւնաբերութեան եւ զբօսաշրջիկութեան բնագաւառներու սեփականաշնորհման գործընթացը, որ ինքնին պատեհութիւն ընծայեց բազմաթիւ արտերկրեան ներդրումներու: Իսկ Միացեալ Նահանգներէ ներս, Պետեան համա-հիմնադրեց առաջին Ամերիկահայ Առեւտրի Պալատը, այդ ժամանակ՝ նախկին սովետ հանրապետութեան մը միակ արտերկրեան պալատը: Ու ան աշխատեցաւ զարգացնել առեւտուրը Հայաստանի հետ:

«Ես տեսապէս նպատակադրած եմ օգնելու Հայաստանին զարգացնելու ազատ շուկայի տնտեսութիւն մը եւ քաղաքացիականօրէն հասուն ընկերութիւն մը», կ'ըսէ ան: Մենք ուշադրութիւն հրաւիրեցինք դէպի առիթներու ստեղծումը եւ գտանք գործընկերներ, որոնք կրնային օգտակար դառնալ մեզի այդ հեռահար նպատակները իրականացնելու համար»:

Հայաստանի առեւտուրն ու արդիւնաբերութիւնը զարգացնելու Պետեանի աշխատանքներու ծիրէն ներս, ինչպէս նաեւ իր այլ գործառնութիւններուն մէջ, Պետեան երբէք չէ հրաժարած կայուն կապեր ստեղծելէ համախոհութեան եւ փոխադարձ շահերու միջոցով:

«Ես կանուխէն իմացայ թէ վիճահարոյց եւ չափէն աւելի յարձակողական ըլլալը քիչ արդիւնքի կը հասցնէ: Ի վերջոյ դուն քեզ պիտի գտնես նախնական քայլին վրայ», Պետեան կը բաժատոր: Ան կ'ըսէ թէ իր լաւագոյն յաջողութիւնները ստեղծուած են երբ ան կացութեանէն աւելի բարձր կանգնած է իմանալու համար թէ մարդիկ իսկութեան ինչ կ'ուզեն: «Եւ մարդ չի կրնար այդ ընել միայն գործառնական տեսանկիւնէն կամ մշակութային հասկացողութեամբ: Մարդ պարտի նկատի ունենալ մասնակից անհատները, տեսնել իրերը անոնց տեսանկիւնէն», կ'ըսէ ան: «Եթէ մարդ կրնայ այդ ընել, ապա ան շատ հզօր գործիքի տիրացած կ'ըլլայ, որոհետեւ ոչ ոք չուզէր ետ մնալ: Բոլորիս ալ հասարակաց գիծն է այդ»:

11 Սեպտեմբեր, 2001ին, ամեն մարդ իմացաւ թէ ինչ կը նշանակէ ետ մնալ: Պետեան այդ համաշխարհային դէպքը վերածեց դասի մը, թէ ինչպէս կարելի է հարմարիլ: Խորապէս սուղուած ճամբորդական եւ գործարանային զբօսաշրջիկութենէ ներս, Պետեան վստահ էր, թէ ապրելակերպի եւ ծախսելու բնագաւառներէն ներս խոշոր փոփոխութիւններ պիտի կատարուին: «Նախքան 9-11ը, համաշխարհային գործարարական ճամբորդութիւնները աճ կ'ապրէին», կ'ըսէ ան: «Յաջորդ օր, մենք փնտրտուքի մէջ էինք թէ ինչպէս մնացածը փրկելինք»:

Հոգ չէ թէ ցնցումը պատճառ դարձաւ գործարարական ձեռնարկութիւններու միլիոնաւոր տոլարներու վնասներով իյնալու ամենայատակը, երկեակ հարցումներ մտան անոր մտքէն ներս. «Այս բոլորէն ետք ինչքան պիտի մնայ եւ ես ի՞նչ պիտի կարողանամ ընել մնացածով»: Պետեան կ'ըսէ թէ դարձեալ «Ես նայեցայ "Ծրագիր Պ.ին" (յաջորդ ծրագրին) ինչպէս ես գայն երբեմն կը կոչեմ»:

Վերականգնման դանդաղ եւ տանջալի աշխատանքը սկսաւ «մի քանի կրամ համեստութեամբ եւ խոշոր անվախութեամբ»: Դիմագրաւելով ընտանիքին ապրուստը ապահովելու եւ իր գործը վերականգնելու պարտականութիւնները, Պետեան պարտաւոր էր աւելի քան երբէք իր կեանքին մէջ, աւելի արագ խորհիլ եւ աւելի ծանր գործել: Ան նկատեց թէ ինք արդէն իր նախկին գործակիցներուն եւ ընկերներուն դիմելով, հայցեց ուղղութիւն եւ պատեհ առիթներ: Մինչ ան վերստին կ'այցելէր իր նախկին ուսուցիչներուն եւ վարպետներուն, ան վերստին տիրացած է այն շատ արժեքաւոր դասերուն, որոնք ան սորված էր իր նախնական տարիներուն:

«Շատ աւելի պարտաւորութիւններ կան, քան ամենօրեայ համաձայնագրութիւնները», կ'ըսէ Պետեան: Անոր գործունէութեանց կեդրոնը «Պետեան Ինթըրնաշնըլ»-ն է, ընկերութիւն մը, որ մասնագիտացած է, բազմամիլիոն տոլարնոց անշարժ կալուածային նախաձեռնութիւններ եւ գնումներ կատարելու մէջ իր յաճախորդներուն համար, որոնց կարգին են Fortune 500 ընկերութիւններէն մինչեւ ԱՄՆի եւ այլ երկիրներու ամենահարուստ ընտանիքները:

«Հաստագլուխ կերպով բանակցութիւնը վարելը արդէն հնաձեւ դարձած է» կ'ընդգծէ Պետեան: «Ան հնամենի դարձած տեսակ մըն է: Եթէ մարդ կ'ուզէ

յաջողիլ, որեւէ բնագաւառէ ներս, ապա ան պարտաւոր է իմանալ թէ ինչպէս կարելի է հաւասակշռել կարիքը եւ օգուտները որպէսզի հնարաւոր դառնայ արժանի լուծումներ գտնել արագօրէն եւ պատշաճօրէն»:

Իր արագընթաց վերականգնման եւ յաջողութեան բանալին խորունկ գնահատումն է այն բանին, որ հիմա կը կոչէ «գործարարական դիւանագիտութիւն», վարչական գործելաձեւ մը, որ մասով մը գործարարական եւ մասով մը փիլիսոփայական է: Գործարարական կողմէն, այն համառ «նազմածեւն» է, որ մարդ կ'ակնկալէ ներդրողներէ, բանակցողներէ եւ փաստաբաններէ, որոնք լաւագոյնին համար փնտրտուքի ելած են: Փիլիսոփայական կողմը կը հենի մարդկայնական տեսութեանց եւ համաժողովութեան կերտման, բաներ որոնք մարդ բնական պայմաններու մէջ չի տեսներ գերշահոյթներ հետապնդող բանակցութիւններէ ներս:

«Համալսարանական տարիներուն, հաւանաբար մենք գայն կոչեցնք տրամաբանութիւն "արդար խաղի սիրոյն"», կ'ըսէ Պետեան: «Սակայն "իրական կեանքը" կը միտի այդ գաղափարը քեզմէ պոկել, յատկապէս, երբ ուրիշներ քեզմէ արդիւնք կը պահանջեն: Բնականաբար, այդ ձեզ կը մղէ միւս անձին նետելու ածուխին վրայ, նախքան որ ան այդ մէկը քո դէմ կատարէ: Եւ ի՞նչ կը մնայ քո ձեռքին: Ոչ մէկ բան. ոչ ոք կ'ախորժի միւսէն, ոչ ոք կ'ուզէ զիջիլ միւսին, ոչ ոք կը շարժի: Բոլոր այդ ժամանակը եւ ջանքերը ի զուր տեղ վատնուած են»:

Պետեան իր առաջին դասը սորված է երբ ան «գործնական լուծումներ» կը մշակէր, երբ ան, 1980ականներուն ծառայեց որպէս «Ֆրետ Սանտո» անշարժ կալուածային ընկերութեան փոխ-նախագահին: Բնակիչներուն գանգատները կը բազմանային, սակայն նոյնպէս՝ վարչական եւ նորոգման ծախսերը: «Ես թոպէական նկատեցի, թէ ընկերութիւնը պարտաւոր է փոխելու գործառնութեան իր ընթացքը եւ թէ այդ փոփոխութիւնը պէտք է գայ յատկապէս դէպի վեր», կ'ըսէ ան: Անոր առաջին քայլը եղաւ վարուելակերպի բարելաւման ծրագիրները, որոնք աշխատաւորներուն կը վարձատրէին լաւ գործունէութեան համար: Ապա ան մշակեց յաճախորդներու ծառայութեան եւ գոհացման միտող գործարարական մշակոյթի դրական փոփոխութիւն: Բանալին, կ'ըսէ ան, աշխատակիցներու համախոհութիւնը ապահովելն էր: Անոնք գիտցան թէ բան պարտի փոխուիլ եւ անոնք խորապէս մասնակից եղան այդ աշխատանքներուն:

«Գրեթէ շատ դիրքին եղաւ», ժպտելով կ'ըսէ Պետեան: Սակայն իր դեկավարը կ'ըսէ թէ արդիւնքը ուրիշ բան չէին քան փայլուն: Նուազ քան վեց ամիսէն, բնակիչ յաճախորդներու գանգատը աւելի քան 50 տոկոսով նուազեցաւ: Վարչական ծախսերը դեռ եւս անկում կը կրէին, երբ ան մի քանի տարի ետք թողեց ընկերութիւնը:

Պետեան, բանակցութեան հանդէպ այս մօտեցումը կը վերագրէ իր ներկայ կացութեան: «Ես տեսաբար մասնակից եղած եմ բարձր կերպով ակնառու գործարարական բանակցութիւններու: Ես շատ մարդոց ժամանումն ու հեռացումը տեսած եմ: Ընդհանրապէս անոնք կ'երթան: Սակայն ես կարողացած եմ մնալ, լաւ կապեր պահպանել գրեթէ բոլորին հետ որ գործակցած են: Ես կը հաւատամ, որ բանակցութեան իմ ձեւը բանալին է այդ արդիւնաւետ կապերուն երկարակեացութեան»:

Բանակցութեան հոգեբանութեան բացատրութիւնը խրթին է: Այցելեցէք իր կայքէջը եթէ կ'ուզէք լաւապէս սորվիլ իր գաղափարները եւ օգտուիլ իր փորձառութենէն: Ան ամփոփելով զանոնք կ'ըսէ թէ ամեն ինչ նախապայմանաւոր է գործարարի համաձայնագրերու ստեղծումով եւ փոխադարձաբար ընդունելի պայմաններ ստեղծելով:

«Ես այնպիսի համաձայնագրեր կը կնքեմ, որ կը խորհիմ թէ երկու կողմերուն համար օգտաւետ է, պայմաւորութիւններ՝ որոնք կ'առաջարկեն լաւագոյն հնարաւորութիւնները փոխադարձ շահի եւ զարգացման համար», կ'ըսէ ան:

Հակառակ կանուխ յաջողութիւններու, Պետեանին բանակցութեան ձեւը իր յաճախորդներէն ոմանց անհանգիստ դարձուցած է: «Հակառակ այնպիսի համաձայնագիր կնքելուս, որ այն ամեն ինչը որ յաճախորդը փափաքած էր, կ'իրագործէ, անձը դարձեալ կը փորձէ աւելին կ'ուզէ: Ան կ'ըսէ թէ ես ամենակատարեալ շահը չապահովեցի, բաւարար արիւն չծծեցի: Այս տիպի յաճախորդները երբէք չեն դադիր համաձայնագիրը իրագործուէ»: Ան շարժապատկերի որակ ունի, համաձայնագիր կայացնողը, որ անձի մը ածուխի վրայ կը նետէ: Ի վերջոյ, գործառնութիւնը գործառնութիւն է, եւ պատերազմը պատերազմ: Սակայն Պետեան մեզ կը զգուշացնէ շփոթել պատերազմը գործառնութեան հետ:

«Վստահ որ պատերազմեան որակ կայ գործառնութեանց բանակցութենէ ներս: Ես երբէք յաջող բանակցողի չեմ հանդիպած, որ Մայր Թէրե- Շար.ը՝ էջ 6-ում

ՅԵՂԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ ՓԱՐԻԶԻ ԿՈՐՍՈՒԱԾ ԱՌԻԲԸ

... ԿԱՍ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՅԵՂԱՅԻՆԵՐԵՆ՝ ԺՈՐԺ ՏԻԲԵՍՈՆԻ: ԵՐԲ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՐԱՔԸ ՆԱՑԻԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԵՆ ԱԶՍԱԳՐՈՒԹԵՑԱԲ 65 ՏԱՐԻ ԱՌԱՋ, ԶՕՐ. ՏԸ ԿՈՆ ՆԱԽԸՆՏՐԵՑ ԶԱՅՆ ԴՈՒՐՍ ԶԳԵԼ ԼՈՒՍԱՐԶԱԿՆԵՐԷ: «ՏԻ ԻՆՏԻՓԵՆՏԵՆԸ» ԹԵՐԹԻՆ ՄԷՋ ՄԱՆՉԵՍԹՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՕՍ ՄԱԹԻ ՔՈՊ, ՅԵՂԻՆԱԿԸ «ՏԸ ՌԵԶԻՍԹԸՆՍ. ՏԸ ՖՐԵՆՉ ՖԱՅԹ ԸԿԵՅՆԱԹ ՏԸ ՆԱԶԻԶ» ԳԻՐՔԻՆ, ԿԸ ՅԵՍԱԶՕՏԷ ՈՐԳԵՐԳԱԿԱՆ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՅՆ ՍԵԿՍՏՈՐԹ ԱՓՐԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԵԿԱՍՄԱՔ, ՈՐՈՆՔ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ՄԱՆԱԿՑԱԾ ԵՆ ՖՐԱՆՍԱՅԻ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ:

26 Օգոստոս 1944-ի շաբաթ յետմիջօրե ժամը 3:00-ն է: Փարիզ ազատագրուած է: Զօր. տը Կոլ Յաղթանակի կամարին եւ շողշողացող արեւուն տակ կանգնած է լրիւ տարազով: Ան կը գլխաւորէ զանգուածային տողանցք մը՝ տօնելու համար նախորդ օր Ֆրանսայի մայրաքաղաքին ազատագրումը նացիական տիրապետութենէն: Ան նաեւ կը ցանկայ ցոյց տալ, թէ ո՞վ է երկրին նոր տերը:

Տը Կոլի ձախին կանգնած է ժորժ Պիտո՝ Դիմադրութեան Ազգային խորհուրդին ղեկավարը: Աջին տը Կոլի անձնական պատուիրակ Ալեքսանտր Փարոտի: Անոնց ետին կարելի է տեսնել Ֆրանսական ազատ բանակին եւ



Փարիզի ազատագրութիւն. բազմութիւններ՝ Փլաս տը լա Բոնըրրոտի վրայ, 1944-ի օգոստոս 26-ին:

Դիմադրութեան ղեկավար ղեմքերը: Լուսանկարչական գործիքին տեսադաշտէն հեռու կը տարածուին զօր. Լըքլերքի զրահապատ զօրամասերու երկրորդ գունդէն 4 հրասայլեր, որոնք մէկ օր առաջ Փարիզ մուտք գործած էին եւ կնքած՝ յաղթանակը: Անոնց ետին մէկ միլիոն ցնծացող ֆրանսացիներ շարուած են Շան Գ'էլիգէի երկայնքին: Ասիկա այն պահն է եւ պատկերը, որ պիտի անցնի պատմութեան:

Սակայն 65 տարի առաջ այս ամիս առնուած լուսանկարին մէջ կայ նաեւ այլ կերպար մը: Աջին կ'երեւի միակ սեւամորթ անձը՝ կուռքի վերածուած նկարին մէջ. իրօք, այն սակաւաթիւ սեւամորթներէն մէկը, որոնք մասնակցած էին տողանցքին: Ան քաղաքային եւ զինուորական հագուստներու խառնուրդ մը կը կրէ: Աջ ձեռքը վիրակապի մէջ է: Ան բոլորովին կը տարբերի վայելուչ հանդերձանքով սպիտակամորթներէն, որոնք կը գերիշխեն տողանցքին:

Անոր անունը ժորժ Տիւքսոն էր, ան միայն 22 տարեկան էր եւ պէտք չէր հոն գտնուէր:

Ընդհանուր խանդավառութեան մթնոլորտին մէջ, համոզուած ըլլալով, թէ ինք ունի մէկուն հաւասար իրաւունք ունէր հոն գտնուելու, Տիւքսոն պարզապէս ինքզինք իրաւորած էր՝ առաջնորդելու համար տողանցքը: Անոր ներկայութիւնը ամբողջութեամբ դուրս էր ծրագիրէ, յանդգնութեան ընդոծին արտայայտութիւն մը, որ շուտով պիտի խամրէր՝ քաղաքական վարք ու բարքի օրէնքներուն ճնշումին տակ: Լրատուական նկարահանումներ ցոյց կու տան,

թէ ան առանց այլեւայլի վտարուած էր արշաւէն՝ զէնքի ուժով, լուսանկարուելէ կարճ ատեն մը ետք: Հակառակ դիմադրութեան մէջ իր դիրքին եւ կշիռին՝ ան տեղ չունէր տը Կոլի տողանցքին մէջ, որ նախագծուած էր իբրեւ խիստ կազմակերպուած իրադարձութիւն մը:

Փարիզի Դիմադրութեան ձայնասփիւռի կայանը, որ կը գործէր ամբողջ կռիւն ընթացքին, ժամը ժամուն նորութիւններ հաղորդելով փարիզեցիներուն՝ Լըքլերքի բանակին մօտալուտ ժամանումին մասին, ժողովուրդին կոչ ուղղած էր փողոց իջնելու: Ամերիկեան բանակի զինուորական օդանավ մը, որ նկարահանողներու խմբակ մը կը փոխադրէր, ցածէն թռչելով՝ լուսանկարներ կ'առնէր, որպէսզի ցոյց տար աշխարհին: Այնքան մեծ թիւով մարդիկ իջած էին փողոց, որ տը Կոլի պատկերացուցած զինուորական դասական տողանցքի ծրագիրը շուտով վերածուած էր «հոյակապ, եթէ ոչ քառսային ժողովրդային դիմակահանդէսի մը», ինչպէս նկարագրած է Սիմոն տը Պոլուար:

Դիմադրութեան անդամները, որոնք կ'եզերէին տողանցքը, եւ որոնք մէկ օր առաջ փողոցներուն մէջ կը կռուէին գերմանացիներուն դէմ, այն կարգապահ ուժերը չէին, զորս տը Կոլ կը փափաքէր տեսնել: Նոյնիսկ ֆրանսական եռագոյն դրօշակները անյարմար էին. սպանական հանրապետութեան մանիշակագոյն, կարմիր եւ դեղին գոյներով հսկայական դրօշակ մը կը ծածանէր Շան Գ'էլիգէի երկայնքին՝ լուսարձակի տակ առնելով աւելի քան 300 հանրապետականներու ներկայութիւնը՝ Լըքլերքի զօրասիւնին մէջ:

Սկիզբը տը Կոլ սաստիկ զայրացած էր: «Ի՞նչ թափթփածութիւն», «Ո՞վ է պատասխանատուն», կ'ոռնար ան, պատռելով դիմադրութեան ղեկավար ժան տը Կոլի տարազը՝ լացնելու աստիճան յուզելով զայն: Սակայն, երբ Ֆրանսական ազատ բանակին ղեկավարը տեսաւ հարիւր հազարաւոր փարիզեցիներու խանդավառութիւնը, շուտով անդրադարձաւ, թէ արտասովոր բան մը տեղի կ'ունենար: Աւելի ուշ ան պիտի յայտարարէր, թէ տողանցքին առիթով իր ներկայութիւնը ցոյց տուած էր, թէ ինք «ճակատագիրի գործիքն էր»:

Թէեւ ամէն ոք չէր բաժնէր տը Կոլի ինքզինք կարեւորելու այս մօտեցումը, այսուհանդերձ տողանցքին մասնակցողներէն մէկը հետեւեալ բառերով կը նկարագրէր այն զարմանալի զգացումները, որոնց թելեր տուած էր Փարիզի ազատագրութիւնը. «Ի՞նչ գերակշռող ցնծութիւն չորս տարուան տխրութենէ ետք: Բնագոյնի պոռթկումը ինչպէ՛ս կը հակասէր գերմանական կարծրութեան: Ցնցութեան պայթում մըն էր, թերեւս ոչ ամբողջ Ֆրանսայի մէջ, սակայն ճշմարիտ Ֆրանսայի, յեղափոխական Ֆրանսայի, որ դրսեւորուեցաւ ամբողջ Ֆրանսայի տարածքին, խորտակեց սովորական կեանքի պատուարները եւ տարածուեցաւ՝ զանգուածային եւ քառսային տարողութեամբ»:

Տողանցքին ամբողջ տեւողութեան բազմութիւններուն ստեղծած քառսային թոհուփոհը եւ անկարգապահութիւնը շղագրգռութիւն կը պատճառէին տը Կոլի: Պահ մը ան նկատած էր երիտասարդ ազատամարտիկ մը, հազարաւորներէն մէկը, որոնք իրենց կեանքը վտանգած էին՝ Դիմադրութեան մասնակցելով, եւ որոնք կ'եզերէին Շան Գ'էլիգէն: Երիտասարդը իր թելին կը կրէր Ֆրանսական ներքին ուժերուն յատուկ Դիմադրութեան կապը, ծրխախտի քլանիկ մը կախուած էր անոր շուրթերէն, եւ ան խելայեղ կը ցնծար: Տը Կոլ հակած էր անոր կողմը եւ ականջին քանի մը բառ փսփսացած էր: «Ի՞նչ ըսաւ», հետաքրքրութեամբ հարց տուած էին շուրջինները: «Տողանցքի ատեն մի՛ ծխէր», եղած էր պատասխանը:

Արդեօք տը Կոլ տեղեա՞կ էր տողանցքին առջեւէն քալելու Տիւքսոնի յանդգնութեան: Թերեւս: Որովհետեւ հետագային ան իր յուշերուն մէջ գրած է. «Երկրորդական դերով մարդիկ միացան զինակիցներու թափօրիս, թէեւ ոչ մէկ իրաւունք ունէին: Սակայն ոչ ոք ուշադրութիւն դարձուց անոնց»:


Տիւքսոն անկասկած ամենէն աւելի ուշադրութեան արժանին էր «երկրորդական դերով մարդոց» շարքին, սակայն ան ոչ թէ անտեսուած էր, այլ դուրս դրուած էր թափօրէն: Անոր դիմագիծը յարմար չէր, թէեւ բազմաթիւ այլ ազատամարտիկներու պէս, որոնք բացակայ էին, ինչպէ՛ս կ'ինքն, համայնավարներ, սովորական աշխատաւորներ, օտարականներ, ան իրապէ՛ս իրաւունք ունէր հոն գտնուելու:

ԽՕՍՔ ԵՄ ՆԱԿԱՐԻՒ

ԱՆԲԱՐՈՒՆԱԿ ՎԱՆՃԱՆ

Անցնող ամիսներուն քանիցս գրեցի քու կրկնեցի իմ համոզումը, Հայ-Թուրք հարցի անբարունակության մասին, կացության մանրամասները պարզելով, ընթերցողներս համոզելու ճիգերով, որ այս Հայ-Թուրք մերձեցումը, սահմաններու բացումը, բարի դրացնության մեր ազնիւ իղձերը չեն իրականանալու եւ ի զուր եւ տարուած աշխատանքները, քանի որ մեր հարեւանները անկեղծ չեն, եւ անոնց համար ամեն ինչի մէջ հաշիւ կայ: Դիմացիւր խաբէլու «ալէ-լուիա»ներով:

Այսքան պարզ բան՝ ԱՄՆ-ն չի գիտեր: Աշխարհին մը մէջ, երբ համա-կարգիչը մօտեցուցած է սահմանները, բոլորը ծանօթ են մեր հարցի էութեան: Այս քա-կիերորդ անգամը ըլլալով կրկին խաբուեցանք եւ մեր բարի դրացնության վեհ գաղափարին զոհը դարձանք: Նախագահներ Ապտուլլահ Կիլի եւ Սերժ Սար-գսեանի ոտնազնդակի դիւանագիտութիւնը «բումերանգ»ի դերը խաղաց եւ մենք վերադար-ձանք հին յանկերգին:



ՅՐԱՆՏ Ի. ՄԻՍՈՆԵԱՆ

Սահմանները կը բացուին, թէ՛ ոչ: Ա. Կիլ «Քանի դեռ Ատրպէյճանի հողերը չեն վերադար-ձուած, սահմաններու բացում չի լինի»:

Այն բոլոր լաւատես խօսքերը, որոնց հաւատք ընծայեցինք, ապարդիւն դուրս եկան:

Թուրք-Ազերի եղբայրակցութիւնը մնաց իր որո-շումին մէջ անխախտ: Տրորել եւ ոչնչացնել Հա-յաստանի Հանրապետութիւնն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետու-թիւնը:

Ահա օրերու հարց է Իլիհամ Ալիեւի վերընտրութիւնը, Հոկտեմբերի 15 թուականին եւ ջախջախիչ յաղթանակ կ'ակնկալուի: Հայր Հ. Ալիեւը եւս իբր միակ թեկնածու միշտ ստացած է առաւելագոյն քուէ:

Այո՛, այսօր եւս Սովետի տիպով կ'ընդանայ ընտրութեանց «մեխանիզմը» եւ բռնատեր Իլիհամ Ալիեւ, ընդդիմութեան տկարութենէն օգտուելով կը նստի նախագահի աթոռին, նախահորերը ցոյց տալով:

Ապտուլլահ Կիլ մէկ քարընկեց հեռու եղող Ծիծեռնակաբերդի յուշար-ձանը չայցելեց, Ցեղասպանութեան խօսք չրաւ: Հազարաւոր փաստերը անտեսեց եւ վերադարձաւ Անգարա: «Աշք Օլսուն»:

Մենք Հայերս ալ խումար խաղացինք, փորձ մըն էր: Այդքան:

Ահա այսօր կրկին կը սկսինք նոր ծայրէն: Մեր այսօրը փառք է ու պատիւ, յիրաւի: 12 միլիոն Հայութիւն աշխարհով մէկ կը ներկայացնենք պայծառ իրավիճակ: Հարիւր տարի առաջ Ատանայի 30 հազար հայութեան սպանոյն էր: Այսօր՝ ցեղասպանուած Հայը՝ Արարատի շուքին տակ կը ստեղծագործէ Հայութեան երեք ու կէս միլիոն զանգուածը նեցուկ ունենալով իր սփիւռք-ները:

Պատմութեան մէջ այսքան հարուստ ու բարգաւաճ չենք եղած: Մեր գոյգ ձեռքերը երկարացրինք, ողջագուրուեցանք մեր դահիճին հետ (մեղա՛, մեղա՛) սակայն կեղծիք էր այդ, դիմացի կողմէն: Երբ փոշին իջաւ եւ մթնոլորտը հանդարտուեցաւ, թուրքի իրական դեմքը ի յայտ դարձաւ:

Մենք ամուր նստած մեր հողին, հայրենակերտութեան լծուած, պիտի ճգնինք մեր նահատակներու կէս թողած Սուրբ Գործը շարունակել:

Երդում տուած ենք օրինակելի մեր ընթացքով օգնելու, որ երկրագունդը մնայ լիացած ու կուշտ, այս փոքրացած աշխարհը ապրի հաշտ, զգայուն դրացիի վիճակով, միշտ պատրաստ օգնելու, ցաւերը թեթեւացնելու:

Մեր Արեւը մի խափան՛էք:

Այս հոդվածը տպագրվել է Հոկտեմբեր 2008: Նկատի ունենալով հոդվածի հեռատեսությունը, խմբագրությունը նպատակահատմար գտավ այն նորից վերատպել:

Միջազգային Գործարարական Դիւանագիտութեան Վարպետը՝ ԿԵՐԻ ՊԵՏԵԱՆ

Սկիզբը՝ էջ 2-ում

զային առաքինութիւնները ունի, սակայն բազմամիլիոն տոլարնոց շինարարական եւ կալուածային գնումներու իմ փորձառութիւնը ցոյց տուած է թէ գեր-յարձակողական դիրքորոշուածութիւնը ընդհանրապէս կայծ կու տայ աչք-աչքի խաղալարացութեան: Ան կը ստեղծէ անտրաբանական եւ անտանելի երեւոյթներ նախնական բանակցութիւններու ժամանակ, որոնք վերաւորութեան պատճառ կը դառնան արգահատանքի», կ'ըսէ ան:

Մինչ ան կ'ընդունի թէ տրաբանական է ի գործ դնել կարգ մը մարտաւարութիւններ ստեղծելու համար լաւագոյն պայմանը, ան հարցականի տակ կ'առնէ այն գաղափարը թէ մարդ պէտք է մրձահարէ իր հակառակորդին մինչեւ ան յանձնուի: «Գեր-յարձակողական մարտավարութիւնները ետ կը մղէ բանակցութիւնները զանոնք վերածելով ջանք վատնելու մարմնամարտի», կ'ըսէ Պետեան:

Պետեան կը մատնանշէ իր վիճակացոյցի փաստին: «Իմ յաջող կերպով լուծած նախնական բանակցութիւններէն շատերը լաւապէս գործեցին մինչեւ այդ համաձայնագրերուն ժամկէտին աւարտը, փոքր կամ առանց փոփոխութեան: Սակայն այն համաձայնագրերը, որոնք յաճախորդներու կողմէ ենթարկուած են "փոփոխութեան", յարաբերութիւնները այնքան անգործնական դարձած են, որ անոնք քանդած են պատեհ առիթները եւ եզրայանգած են դատական ճակատումի:

Պետեանին բանակցութեան ձեւը նաեւ արտայայտիչն է իր արեւելա-կերպին: «Ես կը սիրեմ ամերիկեան ասացուածքը, թէ "չափաւորութիւնը ամեն ինչ է": Երբ ես մանուկ էի, իմ մեծ մայրը շատ յաճախ զիս ըզգաստացուցած տօնական օրերուն կամ ծննդեան օրերուն շատ խաղալիք պահանջելուս առթիւ, կամ անելի մեծ քանակութեամբ կարկանդակ պահանջելուս համար: Իրեն համար, չափաւորութիւնը հսկիչ բառն էր: Սորված դասը՝ "Ապրի գոհունակ զգացումով": Ինծի համար այդ ակնարկը յատկապէս յուզիչ էր գիտնալով, որ այն նուազագոյն խօսքն էր, որ կու գար կնոջմէ մը որ վերապրած էր անօթութիւնն ու սովը Օսմանեան կայսրութեան ձեռքով կատարուած Ցեղասպանութեան ժամանակ»:

Նախքան այդ տնտեսական ճգնաժամը, Ամերիկան սպառողականութիւնը կը կերտէր, ինչ որ կը նշանակէր թէ շատը անելի լաւ է, եւ թէ անելի լաւը կը նշանակէր՝ անելի մեծ: Ամերիկացիները արագօրէն դարձան ակներեւ սպառողներ ամեն ինչի սկսած՝ խաղալիքներէն մինչեւ կարկանդակ եւ անդին: Ես կը խորհիմ թէ այն եզրակացութեան, որ մարդ պարտի յանգիլ ներկայ դէպքերուն առթիւ, այն է թէ շատը անելի լաւ չէ եւ անելի լաւը՝ նուազն է», կ'ըսէ Պետեան: Ան զուգահեռ խօսք Ալեւ Կռնսփանէն երբ ան կ'անելցնէ. «Ամեն տեսակի յոխորտանքները (յատկապէս անմըտականները) հիմա կասկածելիներն են շարք մը տնտեսական եւ ընկերաբանական պատճառներուն համար: Բացարձակ պահանջը կարելի չէ բաւարարել: Եւ հիմա մենք կ'իմանանք թէ, մեծ մայրս իրաւունք ունէր, չափաւորութիւնը իսկութեան մէջ ամեն ինչ է»:

Երբ Պետեան յետադարձ ակնարկ մը կը նետէ իր գործառնութեան ասպարեզին վրայ, ան մօտ վեց հազար գործարարներու կողմէ ընթերցուող իր պարբերականներէն մէկուն մէջ իր գրած խօսքերէն մէջբերում կը կատարէ. "Գործարարական դիւանագիտութիւնը արուեստն է ռազմավարականօրէն մտածելու շարք մը ազդեցութիւններու մասին ձեր վարչական պարունակէն ներս եւ անմիջականէն անդին երթալու եւ զարգացնելու հեռահաս նպատակները»: Պետեան կանգ կ'առնէ. «Անոր իմաստը այն է թէ բանակցութեան գործընթացը պէտք է սկսիլ այն հասկացողութեամբ թէ՛ քաղաքական, անձնական, օրինա-կան, տնտեսական հնարաւորութիւններու տիեզերք մը գոյութիւն ունի, եւ թէ ինչպէս կողմերը կրնան զանոնք ձեւաւորել գործնական եւ յարատեւող գործառնական քաղաքականութեան: Այդ է գաղտնիքը: Այդ է յաջողութեան իսկական բաժակը»:

Իսկ ատկէ անելի լաւ կացութիւն ի՞նչ պիտի ըլլար, քան քու բանակցող գործընկերը թեզ հետ ճամբայ ելլէր, յատկապէս դէպի Հայաստան», Պետեան հարց կու տայ ժպտալով:



DARAGON INSURANCE SERVICES

MEMBER OF AMERICAN AGENTS ALLIANCE

ՄԱՏՉԵԼԻ ԾՐԱԳՐԵՐ ՑԱԾՐ ԿԱՆԽԱԿՃԱՐ

ԱՆԿՃԱՐ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

818-500-0096

FAX: 818-500-0167

2101 N. Pacific Ave., #103, Glendale, CA 91202

Lic # 0C38851

WE INSURE

AUTO ~ HOME ~ COMMERCIAL

HEALTH ~ LIFE

LOW DOWN PAYMENT

ԱՊՏԱՅՈՎԱԳՐՈՒՄ ԵՆՔ

ՄԵՔԵՆԱՆԵՐ ~ ԲՆԱԿԱՐԱՆ

ԲԵՆՆԱՏԱՐՆԵՐ ~ ԳՈՐԾԱՏԵՂԵՐ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ~ ԿՅԱՆՔԻ ԵՎ

ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ